

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ.

Ա. Ա.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱԾԻ ՆԵՐԿԱ ՊԱՏԿԵՐԸ

(Խարհաւողների վերնաւորյանների առիրու)

---

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊ»-Ի  
ՅԵՐԵՎԱՆ 1929 թ.



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՎՆԵՐԻ, ՄԻԱՅԵ՞Ք.

Ա. Ա.

333.161 (Կ7.925)(09)

Հ, 24

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՌՊԵՐԱՁԻԱՅԻ  
ՆԵՐԿԱ ՊԱՏԿԵՐԸ

(Խորհուրդների վերընտրությունների առիրու)



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԳՅՈՒՂԿՈՒԹ»-Ի  
ՑԵՐԵՎԱՆ 1929 թ.

**Գրառեալ. № 1084թ.      Պատվ. № 119.      Տիրաժ 6000**

---

**Պետհրատի լերկըրդ տպարան Յերևանում**

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ԴՐՈՒՅՑՈՒՆԸ  
ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՌԵՐԱՑԻԱՅԻ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեզ մոտ գլուղատնտեսությունն ընդգըր-  
կում է 160.000-ից ավելի առանձին-առանձին  
տնտեսություններ։ Նրանք բաժանվում են յե-  
րեք հիմնական խմբերի՝ չքավորական տնտե-  
սություններ, վորոնք դեռ բավականին ստվար  
թիվ են կազմում, և հնարավորություն չունե-  
նալով իրենց տնտեսությունից ապրուստի ամ-  
բողջ տարվա միջոցները հայթայթել—դիմում են  
վարձու աշխատանքի։

Յերկրորդ խումբը՝ միջակներ. դա գլուղա-  
ցիության այն մասն ե, վորն առանց ուրիշներին  
շահագործելու, իր տնտեսությունից ստացվող  
յեկամուառով ե առջրում։

Վերջապես յերրորդ խումբը՝ դա կուլակ-  
ներն են, վորոնք ունեն խոշոր տնտեսություն  
և զբաղվում են հատկապես ուրիշի աշխատան-  
քը իրենց տնտեսության մեջ շահագործելով։

Մինչև խորհրդայնացումը այդ շահագործ-  
մանը չափ ու սահման չկար, և դա բղխում եր  
հենց տիրող բուրժուական կարգերից։ Այն ժա-  
մանակ քաղաքի բուրժուազիան գլուղն եր թա-

լանում, իսկ գյուղում կուլակը՝ չքավորին ու միջակին։ Այդպիսով գյուղում գնալով շատանում եր չքավորության թիվը, իբ մեջ առնելով և քարքայվող միջակությունը։

Խորհրդայնացումից հետո դրությունը հիմնովին փոխվում է։ Այժմ մեր իրավակարգում հետապնդում ենք, վհչ թե շահագործման խորացման, անհատական կուլակային տնտեսությունների ուռճացման, չքավորի և միջակի քայքայման, այլ ընդհակառակը՝ Խորհրդային իշխանության նպատակն և ամեն կերպ ոգնել չքավորին ու միջակին; բարձրացնել տնտեսությունը, վերակառուցել այն, պայքարել շահագործման դեմ և այլն։ Իսկ այդ հնարավոր և լրիվ իրականացնել մեր զբուղատնտեսության հիմնական վերակառուցմամբ, սոցիալիստական շինարարությամբ, ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում։ Գյուղացիական կոոպերացիան այնպիսի մի հասարակական կազմակերպություն է, վորը մյուս կազմակերպությունների շարքում հատկապես գրաղվում է այդ խնդիրներով։

Մի կողմից ընդհանուր կոռպերացման, մեքենամատակարարման, հայթայթման, կոլեկտիվացման և այլ աշխատանքներով նա ոգնում և չքավորին և միջակին՝ բարձրացնելու և մեքենա-

յացնելու իրենց տնտեսությունը, իսկ մյուս կողմից առանձին տնտեսություններից կազմում ե կոլեկտիվ տնտեսություններ և հակադրում այդ ամբողջն անհատական կապիտալիստական տընտեսությանը, հատկապես կուլակային տնտեսության՝ անընդհատ և արագ կերպով սահմանափակելով նրա շահագործման հնարավորությունները։

Այդպիսով գյուղատնտեսական կոռպերացիան գյուղատնտեսության զարգացման յեզ սոցիալիստական հիմքերով վերակառուցման լավագոյն միջոցներից մեկն ե հանդիսանում։

Բացի դրանից, նա վորպես կոռպերացիա հանգիսանում ե գյուղի և քաղաքի արդյունաբերության շաղկապող ողակներից մեկը, նա մըղում ե աշխատավորության դեպի կուլտուրական և հասարակական ակտիվ գործունեություն։

Կոմմունիստական կուսակցության 15-րդ համագումարի վորոշումների մեջ ուղղակի ասված ե.

«Կոռպերացիան հանդիսանում ե գյուղացիության մասսայական համախմբման տաենալավագույն ձեվը, նրա իննագործունեության յեվ նախաձեռնության զարգացման, նրա տընտեսական յեվ կուլտուր-հաղաքական վերաբաժիշտական ու ընդհանուր սոցիալիստական

շինարարության հունի մեջ ներգրավման ձեզը:  
Այդ ե նրա տարբերությունն ու առավելությունը  
նանդեալ պետառեվտրական յէլ մթերող մար-  
մինների»:

Այս բոլորից հետո քնական ե, վոր պետա-  
կան և հասարակական կազմակերպությունները  
մեկ կողմից և ինքը աշխատավոր գլուղացիու-  
թյունը մյուս կողմից պետք ե ամենալայն չափով  
ոժանդակեն զլուղատնտեսական կոռպերացիալի  
աշխատանքների զարգացմանն ու խորացմանը:

Հատկապես մասսաները պետք ե նայեն  
գլուղացիական կոռպերացիալի վրա վորպես ի-  
րենց սեփական զործի և հանդես բերեն յեռան-  
դուն մասնակցություն:

## ԿՈՌԵՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԸՆԴ- ՀԱՆՐԱՊԵՍ

Հայաստանում գլուղատնտեսական կոռպե-  
րացիան արդեն բոլորել ե գործունեության 4-րդ  
տարին: Բազմազան խնդիրների շարքում նրա  
աշխատանքների մեջ կենտրոնական տեղն ե  
բռնում տնտեսությունների կոռպերացումը:

Ի՞նչ ե արված այդ ուղղությամբ մինչ  
այժմ:

Առ 1-ը հոկտեմբեր 1924 թվի կոռպերաց-  
ված ե յեղել 8919 տնտեսություն, իսկ առ 1-ը

Հոկտեմբերի 1928 թվի հասել ե 65.790-ի, կամ 41,2 տոկոսը բոլոր տնտեսությունների։ Այստեղ մենք արձանագրում ենք կոռպերացման ուժեղ տեմպը և ընդհանրապես մեր նվաճումը կոռպերացման բնագավառում։ Սակայն սրա հետ պետք է կապել մի շարք ուրիշ խնդիրներ։ Գյուղական վոր շերտերը ինչ չափով են ընդգրկված, ինչ դրության մեջ ե կանանց և ազգային փոքրամասնությունների կոռպերացումը, կոռպերացման տեսակաբար կշիռը ըստ գավառների և այլն։ Այս խնդիրների լուսաբանումը մեզ ցույց կտա կոռպերացման աշխատանքների պարզ պատկերը։

Վոչ մի կասկած չի կարող լինել այն մասին, վոր մեր կոռպերացված մասսաների մեջ հիմնական տարրը կազմում են միջակ և չքավոր տնտեսությունները, ապա աննշան մասը՝ կուլտակները։ Վերջնական թվեր տալ հնարավոր չե, քանի վոր Հայոց լուղկոռպի տվյալները այդ մասին վերաբերվում են 1926 թվի վերջերին։ հետագա յերկու տարվա ընթացքում պատկերը չեթե վոչ հիմնովին, գոնե խոշոր չափով փոխվել է, և այժմ հաշվվում ե, վոր կոռպերացված տընտեսությունների ավելի քան չե տոկոսը չքավորներն ու միջակներն են։ Կազմակերպչական 1-ին շրջանում, յերբ մենք փորձ չունեինք, կոռպերացիային անդամագրվել են բավական թվով

կուլակներ, և ընդհակառակը՝ չքավորության կոռպերացումը ընթացել է համեմատաբար դանդաղ։ Ի՞նչով բացատրել վերջին հանդամանքը. նախ նրանով, վոր կոռպերացիան չի ունեցել հատուկ կոռպերացման ֆոնդեր, վորի միջոցով հնարավոր կլիներ անդամագրելու չքավորներին (չքավորությունը ինքն ել հնարավորություն չեր ունենամանավանդ մի քանի տարի սրանից առաջ իր միջոցներով անդամագրվելու), բացի այդ չքավորությունը վորոշ չափով պասսիվ վերաբերմունք եր ցուց տալիս։ Վերջապես չի կարելի բացասել վորոշ տեղերում և կոռպաշխատողների անուշադիր վերաբերմունքը։

Այս տարի վարկային ցանցում յեղել ե 29.955 ռ. կոռպերացման հատուկ ֆոնդ, վորից առ մեկը հոկտեմբերի 28 թ. ծախսված ե կոռպերացման համար 16.500 ռ.։

Մեր տրամադրության տակ յեղած վոչ լըրիվ տվյալներից յերեսում ե, վոր այդ ֆոնդի հաշվին կոռպերացված ե 4385 չքավոր տնտեսություն։ Սա արդեն կազմում ե այս տարվա բոլոր անդամագրվածների 25 տոկոսից ավելին։ Ինկատի ունենալով այն, վոր դեռ մոտ 13.000 ռ. գումար պետք ե գործադրվի այդ ուղղությամբ, նաև այն, վոր անկասկած կլինենց կամ ՓՈԿ-երի հաշվին անդամագրված չքավորներ,

կարելի յե ընդունել, վոր այս տարի կոռպերաց-  
ված մասսալի մեջ չքավորության կոռպերաց-  
ման տոկոսը կհասնի 40-45-ի, թեև այդ քանակն  
անցյալի համեմատ բավական մեծ նվաճում ե,  
բայց և այնպես նորից հիշելով կուսակցության  
դիրեկտիվը չքավորության մաքսիմում կոռպե-  
րացման մասին, պետք ե ուժեղացնել աշխա-  
տանքները, միաժամանակ ուժեղացնելով նաև  
կոռպերացման ֆոնդերը։ Պետք ե առանձնապես  
կանգ առնել նաև կուլակության վրա, վորը գլու-  
ղատնտեսական կոռպերացիայի առանձին ճյու-  
ղերում զգալի տոկոս ե կազմում. նա խցկվելով  
կոռպերացիայի մեջ մի կողմից ոգտվում ե կոռպե-  
րացիայի բարիքներից և միաժամանակ խլուրդա-  
յին աշխատանք ե տանում այդ կոռպերացիան  
քանդելու համար։ Այժմ նրանց տոկոսը գնա-  
լով պակասում ե, շնորհիվ չքավորների և մի-  
ջակների թվի աճման և մի շարք այլ միջոցների  
ձեռնարկման։

Կանանց կոռպերացման բնագավառում շատ  
քիչ աշխատանք ե տարված, նրանց թիվը կոռ-  
պերացիալում չի անցնում 4 տոկոսից։ Ի՞նչով  
պետք ե բացատրել այդ թուլությունը։ Նախ՝ նը-  
րանով, վոր կոռպերացվում ե տնտեսությունն  
ամբողջովին և ըստ սովորության անդամագլր-  
վում ե տան տղամարդը, վորպես տնտեսության

ղեկավար, ապա՝ պետք ե ի նկատի ունենալ կենցաղային կաշկանդող պայմաններն ու գոյություն ունեցող պասսիվությունը:

Այժմ պարմաններն ավելի դյուրին են դարձել, հրատարակված են կառավարական մի շարք վորոշումներ՝ կանանց մեջ կոռպերացման աշխատանքներն ուժեղացնելու մասին:

Ի՞նչ պետք ե անել: Խորհրդանացումից հետո 8 տարվա ընթացքում ստեղծվել ե ակտիվ գեղջկուհիների վորոշ կադր: Կին պատգամավորական ժողովում ունենք հազարավոր կանայք, Առաջին հերթին պետք ե կոռպերացիալի մեջ ընդգրկել նրանց և որինակ դարձնել մրուների համար: Բանգեղջբաժիններն ու այլ կազմակերպությունները պետք ե լայն աջակցություն ցուց տան կոռպերացիալին. պետք ե բացատրել, պարզաբանել մեր գեղջկուհուն, վոր նրա մասնակցությունը կոռպերացիալի մեջ միանգամայն ոգտագետ և անհրաժեշտ ե, վորքան և տղամարդունք: Բացի այդ, հատկապես պետք ե զարգացնել կոռպերացիալի ախալիսի ճյուղերը, վորտեղ կանացի աշխատանքն ավելի ցործադրելի լի (շերամապահություն, թոշնաբուծություն և այլն):

Ի՞նչու յենք առանձին շոշափում աղջային փոքրամասնության խնդիրը—այն պատճառով,

վոր նըանց կոռպերացման ճանապարհին մենք նույնպես քիչ խոչընդոտների չենք պատահում:

Ազգային փոքրամասնություն մեզ մոտ կազմում են՝ թուրքերը, ոռուները, լեզիդիները և այն. ոռուներից բացի, մյուսները դեռ ևս կուլտուրապես և կենցաղով ավելի հետամնաց են, լեթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, վոր կոռպերացիայի գաղափարները դեռ բավականաշափ պարզ չեն բոլորի համար, այն դեպքում հասկանալի կլինեն աշխատանքի դժվարությունները:

Զնալած այդ բոլորին նրանց կոռպերացումը ընթացել ե բավարար, հատկապես վարկային դգձով: Անդամագրված են 19,6 տոկոս, այն ժամանակ լերը ազգաբնակչության մեջ նրանք կազմում են 15,5 տոկոս:

Խոշոր դժվարությունների լենք հանդիպում նրանց կոռպերացմանը արտադրական կոռպերացիայի ասպարիզում:

Վերջապես ի՞նչպես և ընթացել կոռպերացումը ըստ գավառների:

**Թվերը ցույց են տալիս հետևյալը.**

Գավառի անունը	Առ. 1-ն հոկտեմբերի 1926 թ.		Առ. 1-ն հոկտեմբերի 1928 թ.	
	Անդամ. թիվ	Տոկոս	Անդամ. թիվ	Տոկոս
Յեղեան	4434	16,8	14868	53,5
Լենինական	2617	10,1	7668	27,8
Եջմիածին	3427	13,5	13971	52,5
Փամբակ-Ղոռի	5287	24	10237	43,7
Նոր Բայազետ	1506	8,3	5558	29,6
Դիլիջան	2323	17,8	6442	41,4
Զանգեզուր	878	6,4	3731	26,6
Դարալաղյաղ	408	6,8	1632	26,3
Մեղք	468	29,2	2097	91,2

Ինչպես տեսնում ենք առաջին տեղը զրավում ե Մեղքին, ապա՝ Յեղեանը, Եջմիածինը և այլն, իսկ վերջին տեղը՝ Դարալաղյաղը։ Նկատվում ե, վոր ընդհանրապես լեռնագավառները, ինչպիս որինակ՝ Զանգեզուրը, Բայազետը, Դարալաղյաղը ավելի հետ են մնում։ Իսկ ընդհակառակը դաշտավայրերում կոռպերացումը բարձր է։ Դա պետք ե բացատրել նրանով, վոր դաշտավայրը տեխնիքական բարձր կուլտուրաների շրջան ե, այստեղ տնտեսությունն ունի բարձր ապրանքայինություն, հաղորդակցության հարմար

միջոցներ, և գլուղացիությունը կուլտուրապես  
անհամեմատ բարձր է։ Պետք է մի շարք միջոց-  
ների ձեռնարկել, ուժեղացնելու կոոպերացման  
թափը նշած հետ մնացած զավառներում, այն  
հաջովակ վորպեսզի վորոշ ժամանակում նրանց  
կոոպերացման տոկոսը հավասարեցվի Հայտա-  
տանի կոոպերացման միջին տոկոսին։ Այդ պետք  
է անել, մանավանդ վոր նշած դավառներում  
կան մեծ տոկոսով չքավորներ։

### ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՈՌԵՐԱՑԻԱՆ

Վերեռում նշեցինք, վոր գլուղատնտեսական  
կոոպերացիան, դա հենց աշխատավորության  
գործն է։

Այժմ ընդհանուր առմամբ նա բավական  
հասկանում ու գնահատում է կոոպերացիան։  
Բայց, ինքն աշխատավորը դեռ մասսականո-  
րեն չի մասնակցում կոոպաշխատանքներին։

Ի՞նչով կարող է արտահայտվել նրա մաս-  
նակցությունը։

Նա կարող է մասնակցել կոոպերացման,  
վարկավորման, մեքենամատակարարման, կուլտ-  
կրթական և այլ աշխատանքներին։ Զքավորու-  
թյունը, միջակների ակտիվի սասնակցությամբ՝  
պարբերաբար պետք է ունենա խորհրդակցու-  
թյուններ, քննության առնի կոոպերացիայի ամ-

բողջ գործունեությունը կամ առանձին խնդիրները, տա իր կարծիքը և վորոշումները:

Աւեն մի կոռպ. վաշչական ստուգիչ մարմնի և խորհրդի չքավոր անդամներից պետք ե կազմվի չք սվորական խմբակ, վորը նույնպես պետք ե քննության առնի կոռպերացիալին վերաբերվող կարեոր խնդիրները: Այդ բոլորից հետո բնական ե, վոր շատ արտգ կչեզոքանա կուլակը, չեն լինի մեր պրոլետարական դասակարգակին գծի այնպիսի կոպիտ խախտումներ, ինչպիսիք յեղել են ընթացիկ տարում՝ վարկավորման և մեքենամատակարարման բնագավառում: Միայն միջակի հետ դաշնակցելով ե, վոր մենք կարող կլինենք կուլակի դեմ ավելի հաջող պայքարել, սոցիալիստական շինարարության գործը ավելի արագ տ անել: Կ ուլակը նույնպես աշխատում ե սիջակին իր կողմը քաշել և նրան հակաղել մեր բոլոր ձեռնարկումներին, հաղթողը նա կլինի, վորի կողմը կանցնի միջակը: Այժմ նա չքավորության հետ ե: Պետք ե ել ավելի ամրացնել այդ կապը:

### ՊԵՏՔ Ե ԶԱՐԳԱՑՆԵԼ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ ԿՈՌԵՐԱՑԻԱՅՈՒՄ

Յերկրի բնական աշխարհագր սկան բազմագան պայմանները ստեղծել են բազմազան զբաղմունքներ զյուղացիության համար, մի փոքրիկ տարածության վրա:

Կոռպերացիան իր հերթին կազմակերպման  
առաջին խոկ շրջանից ընդգրկում եւ գլուղատըն-  
տեսության հետևյալ ճյուղերը՝ կաթնատնտեսա-  
կան, այգեգործական, բամբակագործական, ծը-  
խախոտագործական, խոզաբուծական, ձիաբու-  
ծական, շերամապահական, մեղվաբուծական,  
մելիորատիվ, վոչխաբարուծական, թոչնաբուծա-  
կան և այլն, և այլն. վատն այն եւ, վոր յուրա-  
քանչյուր մի շրջանում թված ճյուղերից մեծ-  
մասին կհանդիպելինք:

Միայն գյուղացիության գլխավոր զբաղմունքը՝ անասնապահությունը, այգեգործությունը, բամբակագործությունը և այլն, զգալի տոկոսով են կոռագերացված։ Այդ յերեսում են հետեւալ թվերից։

Ի՞նչ ենք տեսնում. մի քանի զբաղմունքներ 100 տոկոսով են ընդգրկված։ Հետ ե մուռանասնապահությունը, վորը գլուղացիության մեծամասնության հիմնական զբաղմունքն է կաղմում։ Մինչ այժմ կոռապերացման աշխատանքները տարվել են միայն նրա կաթնատընտեսական յենթաճյուղում։ Անհրաժեշտ է այդ ասպարիզում տշխատանքները ավելի ուժեղացնել, կազմակերպելով մյուս ճյուղերը, ինչպես՝ վոչխարաբուծությունը, խողաբուծությունը և այլն։

Գլուղկոռապերացիան ունի իր ստորաբաժնումը և ըստ կոռապերատիվ տեսակների։ Ահա դրանք՝

1. Գլուղվարկալին կոռապերացիա,
2. կաթնատնտեսական,
3. խառն գլուղատնտեսական,
4. այգեգործական,
5. բամբակագործական,
6. ծխախոտագործական,
7. մեղվաբուծական,
8. շերամապահական,
9. վոչխարաբուծական,
10. թոչնաբուծական,
11. մեքենապտագործական,
12. կոլտնտեսություններ։

Առաջ յեղել են. և այլ տեսակներ, վորոնք ժամանակի ընթացքում կազմալուծվել են կամ միացվել։

Հետեւալ տախտակը ցույց ե տալիս թե 24 թվից հետո ինչպես են կազմակերպվել և դարձացել կոռապերատիվները։

ՀԱՅ ՀԱՍՏ ԿԱՐԳԻ ԿԱՐԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ	ԿԱՐԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ		ՀԱՅ ՀԱՍՏ ԿԱՐԳԻ ԿԱՐԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ		ՀԱՅ ՀԱՍՏ ԿԱՐԳԻ ԿԱՐԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ		ՀԱՅ ՀԱՍՏ ԿԱՐԳԻ ԿԱՐԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ	
	ՏԵՂԵԿԻ Հ Առ 1-Ն ՀԱԿԱՑՈՒՅ. 1924 թ.	ՀԱՅ ՀԱՍՏ ԿԱՐԳԻ Հ ՀԱԿԱՑՈՒՅ. 1928 թ.	ՏԵՂԵԿԻ Հ Առ 1-Ն ՀԱԿԱՑՈՒՅ. 1924 թ.	ՀԱՅ ՀԱՍՏ ԿԱՐԳԻ Հ ՀԱԿԱՑՈՒՅ. 1928 թ.	ՏԵՂԵԿԻ Հ Առ 1-Ն ՀԱԿԱՑՈՒՅ. 1924 թ.	ՀԱՅ ՀԱՍՏ ԿԱՐԳԻ Հ ՀԱԿԱՑՈՒՅ. 1928 թ.	ՏԵՂԵԿԻ Հ Առ 1-Ն ՀԱԿԱՑՈՒՅ. 1924 թ.	ՀԱՅ ՀԱՍՏ ԿԱՐԳԻ Հ ՀԱԿԱՑՈՒՅ. 1928 թ.
1. Գյուղվարկային	16	28	—	—	3	—	41	
2. Խառը Գ. Տ. Ընկերություն	8	9	7	—	7	—	3	
3. Մասնագիտական վորից՝	52	205	10	27	51	3	166	
4. Կաթնարտելներ	33	89	5	3	19	—	95	
5. Այգեգործական	8	21	—	—	4	—	25	
6. Բամբակագործական	—	29	—	13	2	—	14	
7. Ծխախոտագործական	1	13	—	2	6	—	6	
8. Մեղվաբուծական	9	13	—	3	6	—	13	
9. Շերամապահական	1	2	—	—	—	—	3	
10. Վոշաբարուծական	—	2	—	—	1	—	1	
11. Թռչնաբուծական	—	3	—	—	2	—	1	
12. Զիարածական	—	1	—	—	1	—	—	
13. Զինուրակական	—	1	—	—	1	—	—	
14. Մեքենապահական	—	28	5	6	9	—	8	
15. Մելիորատիվ	—	1	—	—	—	1	—	
16. Տնայնագործական	—	2	—	—	—	2	—	
17. Կոլանտեռություններ	—	66	2	—	7	—	57	
	Ընամենը	76	308	19	27	68	3	267

ի՞նչ ենք տեսնում. նախ՝ խառը գյուղատնտեսական ընկերությունները գնալով պակասում են, վորպես անկենսունակ. ներկայիս գոյություն ունեցող համարյա յերեքն ել լուծարքի նախորյակն են ապրում, ինչպես որինակ՝ Յերևանի Մըջակայքում դտնվող «Շահումյան» գյուղատընտեսական ընկերությունը, վորը փաստորեն վոչ մի կոռպ. աշխատանք չի տանում։ Խոշոր զարգացում ե հայտնաբերում մասնագիտական կոռպերացիան—52-ից համար 164-ի։

Սակայն այդ աճման հեա միասին տեղի լեռնենում մեծ քանակով միացում և լուծարքում։

Դրա պատճառներն այն են, վոր կազմակերպման ժամանակ մանրամասն չեն ուսումնասիրվել բոլոր նախադրյալները։ Կազմակերպվել են փոքրիկ ընկերություններ, վորոնք աշխատանքի ընթացքում միշտ մնաս են կրել, բացի այդ, կազմակերպվել են այնպիսի վայրերում, վորտեղ զարգանալու վոչ մի հեռանկար չի յեղել. դրա հետևանքով լուծարքվել են ծխախոտագործական, թոշնաբուծական և այլ ընկերություններից շատերը. ներկայումս ել գոյություն ունի կոտայքի շրջանի Պտղնի գյուղում մի ծխախոտագործական ընկերություն մոտ 50 անդամով, բայց ունի ծխախոտի ցանքս վոչ ավելի քան 4 դեսլատին։ Նույնը՝ Վեդիում, Արմաշում և այ-

լուր: Ալդ բոլորի հետեանքով Գյուղկոռպերացիայի ցանցը մի ժամանակ բավական հիվանդութեար միայն վերջին ժամանակները սկսված առողջացման աշխատանքները մասամբ տվել են վորոշ դրական արդյունքներ: Պետք ե շարունակել և հետագալում վերակազմել և լուծարքի թենթարկել թուլ, անպետք, անկենսունակ ընկերություններ՝ հենց կոռպերացված մասսայի աջակցությամբ: Նորերը կազմակերպելիս պետք ե նախապես մանրամասնորեն ուսումնասիրել բոլոր պայմանները: Ընդհանրապես գյուղացիական կոռպերացիան հետագայում պետք ե զարգանամասնագիտացման ճանապարհով, դրա համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ հատուկ տվյալներ՝ տնտեսական շրջայնացման մասին:

Այժմ անցնենք գյուղատնտեսական կոռպերացիայի առանձին տեսակների բնույթագրմանը:

### ԳՅՈՒՂՎԱՐԿԱՅԻՆ ԿՈՌԵՐԱՑԻԱՆ

Վարկացին կոռպերացիան ամենալժեղ տեսակն է գյուղատնտեսական կոռպերացիայի սիստեմում: Նրա միավորները դասավորվում են ըստ վարչական շրջանների: Անդամների թիվը հասնում է 37057-ի, այսինքն՝ ամբողջ կոռպերացված տնտեսությունների 50 տոկոսից ավելին: Ասեն մի ընկերությանն ընկնում ե միջին

թվով 800-ից ավելի անդամ, իսկ կան այնպիսի ները, վորոնց անդամների թիվը համառւմ և մոտ 2000-ի. 1929 թվին միավորների թիվը՝ կհասնի մինչև 50-ի, իսկ այժմ 41 է:

Ի՞նչ աշխատանք ե կատարում վարկային կոռպերացիան:

Նա զբաղվում ե գյուղատնտեսության վարկավորման, ավանդացին, մեքենամատակարարման, մթերքների հայթայթման և այլ աշխատանքներով։ Հայդրուղկոռպը գործարքների խոշոր մասը գյուղում կատարում ե վարկային կոռպերացիայի միջոցով։

ա. Վարկավորման աշխատանիք. պետությունն ամեն տարի միլիոնավոր ռուբ. գումար ե բաց թողնում գյուղատնտեսության զարգացման համար։ Յ տարվա ընթացքում մեր գյուղացիությանը բաց են թողնված հետեւյալ գումարները.

25	26	տնտեսական տարի . . .	2.033.100	ռուբ.
26	- 27	" " "	3.030.200	"
27	- 28	" " "	4.034.000	"

Ընդամենը 9.097.300 "

(Տվյալները Գյուղբանկից են): Նրանք դեռ լրիվ թվեր չեն:

Նախ ամեն մի աշխատավոր գլուղացի պետք ե լավ հասկանա, վոր միմիայն Խորհրդավոր իշ-

խանությունն ե, վոր նման հսկայական գումարներ ե ծախսում զյուղատնտեսության վրա, ապա՝ մենք պետք ե մտահոգված լինենք այն խնդրով, թե ինչպես և ուր են ծախսվում այդ գումարները:

Մեզնից ամեն մեկը շահազբգոված ե իմանալու, թե այդ դրամը վարկի կարգով մւտք ե տրվում:

Ղեկավարող կազմակերպությունների վորոշման համաձայն, բոլոր վարկերը պետք ե տալ միայն չքավոր և միջակ տնտեսություններին, և այն ել առաջին հերթին՝ կողեկտիվ տնտեսություններին: Ինչ վերաբերում ե կուլակին, նա վոչ մի կոպեկ չպետք ե ստանա: Խորհրդավին դրամը կուլակի տնտեսության համար չե: Ի՞նչ ենք արձանագրում իրականության մեջ — հարյուրավոր դեպքեր լերը հատկապես վարկավորվել են ունեություններն ու կուլակները, այն ել լերկարատե վարկով:

Բացի այդ չքավորության վարկավորման համար կազմակերպված ե հատուկ ֆոնդ: Ըսթացիկ տնտեսական տարում այդ ֆոնդը հավասար ե 174.813 ռուբ., վորից առ 1-ը հոկտեմբերի 28 թ. բաշխված եր 149 500 ռ.: Ցեղակի չեն դեպքերը, լերը անգամ այդ վարկը իր նպատակին և ժամանակին չի ծախսված ընկերության

կողմից։ Դա ամենակոպիտ կերպով խախտումն ե գյուղում տարվող մեր քաղաքականության։ Պետք ե պայքարել նման սխալների վերացման համար։

Ի՞նչպես պետք ե պայքարել. նախ՝ աշխատողների կադրը պետք ե ընտրել մեր քաղաքական ուժունը հասկացող մարդկանցից և նրանց հաճախ փոփոխման չենթարկել։ Յերկրորդ՝ պետք ե ուժեղացնել կենտրոնի ղեկավարությունը։ Յերրորդ՝ պետք ե իր դերում լինի ստուգիչ հանձնաժողովը։ Վերջապես ինքը կոռագաշխատավորը մանավանդ չքավորությունը, նույնպես կարող ե ոզնություն հասցնել՝ մասսայական հսկողության միջոցով։

Վարկավորման ասպարիզում հաճախակի սխալը լինում ե նաև այն պատճառով, վոր վարչության նախագահը միանձնյա կերպով ե բաշխում վարկը. բնական ե, վոր նա չի կարող ճանաչել բոլորին և սխալներ չանել։ Ամենաճիշտ ձեռն այն կլինի, վոր վարկերի բաշխման խնդիրը նախ որոք քննվի, նախապատրաստվի չքավորական խմբակներում, վարչության վերստուգիչ հանձնաժողովի նիս։ ուժ ե այն։

Բավական չե միայն վարկը բաց թողնել, պետք ե հետեւել թե վարկն ինչպես ե ոգտագործվում գյուղացու կողմից։ Ստուգումներից

արզվում ե, վոր հաճախակի յեն դեպքերը, յերբ  
պվարկն իր նպատակին չի ծառայում: Բանուկ ա-  
նասունների վարկը տալիս են վոչիարի, սերմա-  
ցուի, անգամ պատահում ե՝ հագուստեղենի: Պա-  
տահել ենք անտեսության, վորը Յ տարվա ըն-  
թացքում 13 անգամ վարկ ե սուսցել 500 ռուբլուց  
ավելի, սակայն այդ գումարի դիմաց այժմս տնտե-  
սության մեջ վոչ անասուն կա, վոչ գործիքներ:  
Ի՞նչ անուն տալ այդ յերեւուչթին:

Դա մեր սուղ միջոցների վատնման մի ձե ե,  
յեթե դրա դեմ չկուվնք, յեթե գյուղացուն չ'հա-  
մոզենք ստագած դրամը ըստ նպատակին ծախսի,  
գյուղատնտեսությունը յերբեք արագ չի բարձ-  
րանա: Այստեղ պետք ե հիշել ընկ. Ռիկովի այն  
խոսքերը, վոր «խորհրդային ամեն մի կոպեկը  
ավելի շատ ոգուտ պետք ե տա քան կապիտա-  
լիստական մեկ ռուբլին»:

Գյուղատնտեսական կոռպերացիան, բայց  
պետության կողմից տրամադրված զումարներից,  
շրջանառության մեջ պետք ե դնի նաև այլ մի-  
ջոցներ: Վերտեղից նա կարող ե ձեռք բերել  
այդ միջոցները:

Բոլորս ել գիտենք, վոր այժմ մեր գյուղա-  
ցին, որվա կարիքները հոգալուց դուրս, ոճեն: Ա  
ե և փոքրիկ խնայումներ, վորը յերկար ժամանակ  
անշահ պառկում ե նրա գրպանում:

Վարկային կոպերացիան զրադվում ե ա-  
վանդային գործառնությամբ: Պետք ե աշխատել

ալդ խնայումները ներգրավել կոռպերատիվ շրջանառության մեջ, ստանալով վորպես ավանդ՝ Ալդպիսով կատացվի կրկնակի ոգութ, նախ՝ գյուղացին ավանդ մտցրած դրամի համար մինչև 6 ռուբ. 100-ին ստանում ե վորպես տոկոսներ: Եերկրորդը՝ վոր նա ալդ դրամները ժամանակավորապես մինչև տիրոջը վերադարձնելը դնում ե նույն սնտեսության բարձրացման գործին: Ի՞նչ ե արված մինչ այդմ. ավանդների գումարը համար 465.870 ռ. սակայն այդ գումարից միայն 5295 ռ, 11,9 տոկոսն ե ստացված գյուղացիներից: Մնացածը զանազան կաղմակերպություններին ե: Ինչպես տեսնում ենք գյուղացին դեռ ավանդ չի տալիս: Ինչու, վորովիետե նա տեսնում ե, վոր մեր կոռպերատիվները լավ չեն աշխատում, մնաս են անում: Իսկ ճիշտ ե վոր մեր կրոպերատիվներից կեսից ավելին դեռ մնաս են անում: Քիչ չեն դեռ չարաշահության դեպքերը:

Այդ ամբողջը վորոշ թերահավատություն ե ներշնչում գյուղացուն դեպի վարկային կոռպերացիան, նա վախենում է վոր իր դրամները հանկարծ կարող են կորչել:

Ավանդալին աշխատանքները ամեն կերպ պետք ե ծավալել. դրա համար նախ՝ պետք ե կանոնավորել կոռպերատիվ աշխատողների կազմը, խիստ պայքարել չարաշահությունների դեմ և ապա՝ գյուղացիության մեջ նորից ուժեղացնել բացատրական աշխատանքները:

Վարկալին կոռպերացիայի մկու աշխա-

տանքների մասին կգրենք այլ տեղում, այժմ  
ավելացնենք փայտավճարների զանձման անհրա-  
ժեշտության մասին, փորպես դրամական միջոց-  
ների մի աղբյուրի:

Մինչ այժմ գանձված է 570.258 ռ. կամ  $70^0/0$ :

### ԿԱԹՆԱՏՆԵՍԱԿԱՆ ԿՈՌՈՒՐԱՑԻԱ

Մասնագիտական ցանցում կաթնատնտեսա-  
կան կոռպերացիան զլսավոր տեղերից մեկն է  
ըսնում. նրա ցանցը հետեւյալ պատկերն ունի.

№ Ա. Ընդ կարգի	Գավառների անունները	Արտելների թիվը	Կոռպան- գանիների թիվը	Կոռպան- գանիների թիվը առ 1-ի 1928 թ.
1.	Փամբակ-Լոռի . . . . .	41	4025	13032
2.	Լենինական . . . . .	15	1163	3184
3.	Նոր-Բայազետ . . . . .	15	1585	2666
4.	Դիլիջան . . . . .	8	544	682
5.	Զանգեզուր . . . . .	7	785	
6.	Դարալաղյաղ . . . . .	2	133	2158
7.	Յերևան . . . . .	7	241	
8.	Եղմիածին . . . . .	—	—	
9.	Մեղրի . . . . .	—	—	
Ընդամենը . . .		95	8426	21722

ԾԱՆՈԹՈՒԹՅ.—Յերեանինը և Ն.-Բայազետինը միասին ե  
վերցված:

Տախտակից յերևում ե, վոր կաթնատնտեսությունը հատկապես զարգացել է անասնանապահական շրջաններում։ Յերևանի գավառի արտելները Յերևանին թարմ կաթ մատակարարելու համար են՝ կազմակերպված և փոքրիկ միավորներ են։

Կազմակերպչական բացերից մեկն այն է, վոր աշխատանքները կինտրոնացված են յեղել սկզբնական շրջանում միայն Փամբակ-Լոռում, այն ել յերկու գավառակում։

Մյուս գավառները համեմատաբար աչքաթող են արված յեղել և միայն վերջին յերկու տարումն ե վոր հատուկ ուշադրություն ե դարձը վում։

Կաթնատնտեսական կոռուպերացիալում զգալի թվով ունեուներ և կուլակներ կան. նրանք ուժեղ են մանավանդ Ստեփանավանի և Վարանց Դվիկարի շրջանների արտելներում։ Ցեթե ամբողջ ցանցում միջին տոկոսը հասնում է 10—11.ի, այդ շրջաններում 16.-ից ել ե անցնում։

Անկասկած, ալդ նույնպես մի խոշորագույն բաց ե։ Այս դրությունը անդրադառնում է մեր ամբողջ աշխատանքների վրա։ Ինչու այն արտելներում, վորտեղ ունեոր կուլակային տարրը ուժեղ է, մեր վորոշումները, հրահանգները հան դիպում են անասելի դիմադրության և անդամ մնում են անկատար։

Որինակ՝ ընթացիկ տարում նրանք հրաժարվում ելին պանրի, յուղի պայման կնքելուց. պատրաստած մթերքը հանում ելին Թիֆլիսի մասնավոր շուկան, հրաժարվում եյին կազմակերպել չքավորական և այլ ֆոնդեր, և այլն:

Աշխատանքների հաջողությունը պահանջում է մեզանից մի շարք կնոկրետ և ուժեղ ձեռն արկումներ. ա) կազմակերպչական աշխատանքները պետք ե ուժեղացնել մյուս գավառներում, կազմակերպելով այնտեղ նոր արտելներ։ Մրանով մենք կ սմաց կամաց կնվազեցնենք մեր կախումը ունեորային արտելներից՝ հալթալթման ինդրում։ բ) Զքավոր և միջակ գյուղացիությունը այդ արտելներում պասսիվ ե մասամբ ունեորների աղղեցության ներքո։

Պետք ե ուժեղացնել չքավորների և միջակ-ների ընդունելությունը։ Միաժամանակ անհրաժեշտ ե ակտիվացնել կոռապերացված չքավորին, սիջակին և նրանց միացրալ կերպով հակադրել կուլակին։ Ղեկավարող մարմիններում տեղ չպետք ե ունենա վոչ մի ուները կամ կուլակ. պետք ե զտել կոռապ. շարքերից նրանց, ովքեր փորձեր կանեն հակառակել մեր քաղաքականությանը։

Ի՞նչպես են աշխատում կաթնարտելները։ Անդամներից շատերը զործին ձեականու են

են մոտենում։ Յերեք-չորս կով ունեցողը արտելում ցուցակագրում ե մեկը, այն ել վատը, կաթը լրիվ չեն հանձնում կամ փորձեր են անում ջուր խառնել։ Զկան մեր արտելներում հարմար շենքեր, փորձված վարպետներ և այլն։

Այդ թերությունների վերացման համար պետք ե ստածի կենտրոնը և տեղի աշխատակիցներն ու կոոպերացիայի անդամները։

Գյուղացին լավ է հասկանում արտելի ռուավելությունները. կեղտատ անպետք պանրի փոխարեն, վորը յերբեք հինգ ռուբլուց բարձր չի ծախվել, նա ստանում ե մաքուր, բարձր վորակի թուշի կամ շվեցարական պանիր, վորին խոշոր կարիք ե զգուժ մեր շուկան։ Բացի այդ, արտելում կոլեկտիվ կերպով ձեռք են բերվում ազնվացեղ ցուլեր, աստիճանաբար իրականացնում են ռացիոնալ կերակրումը։ Կոլեկտիվ կերպով ավելի արտոնալ պայմաններով են ստանում արոտավայրերը և այլն։

Վերջին յերկու տարվա ընթացքում Պանիր-լուղկենտրոնի աշխատանքները հայթալթման բնագավառում տալիս են հետեւյալ պատկերը. —

1927 թ. հայթալթված ե՝

Թուշի պանիր 27.229 դ., շվեց. 15.843 դ.

Կարագ 1.765 դ.

Թարմ կաթ 69.319 դ.

Կարիքի հետևանքով ներմուծել ենք 3500 փ.  
պանիր դրսի շուկալից:

1928 թ. հայթալթված ե՝

Թուշի պանիր 31.000 փ., շվեց. 12.200 փ.

Կարագ 2.000 »

Ցուղ 2.000 »

Թարմ կաթ 100.000 »

1929 թ. յենթադրվում ե աշխատանքները  
ավելի ծավալել և դա ըստ յերկույթիս հնարա-  
վոր ե, քանի վոր գնալով կազմակերպչական աշ-  
խատանքները տրտելներում և աշխատանքները  
Պանիրյուղկենտրոնի սեփական գործարաննե-  
րում կանոնավորվում են:

### ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՌԵՐԱՑԻԱՆ

Այգեգործական կոռպերացիան ունի 25 միա-  
վոր, վորոնք գլխավորապես կենտրոնացած են  
Յերևանի և Եջմիածնի գավառներում։ Կոռպե-  
րացված ե 5472 տնտեսություն և 3695 դեսյա-  
տին այգի, վորը կազում ե այգիների ամբողջ  
քանակի 45 – 47 տոկոսը։

Այգեգործական կոռպերացիայի նվաճում-  
ներից մեկն այն պետք ե հաշվել, վոր նա սո-  
վորեցնում ե զյուղացիությանը մշակման նոր  
ձևեր, հատուկ մասնագետներ ե պահում, շրջան-  
ներում անց ե կացնում բժշկություն և այլն։

Այգեզործական արտադրանքի մթերումների չափերը գնալով ավելանում են:

Անցյալ տարի մթերված ե յեղել խաղող—  
310 հազար փութ, գինի—9 և հազար դույլ, ողի—  
1425 հազար գը., ամբողջ մթերումը հավասար ե  
լեղել 1300 հազար ռուբլու, ընթացիկ տարում  
հետեւյալ թվերն ունենք առաջման ձեռքի տակ:

Խաղող 870 հազար փութ, գինի 130 հազար դույլ, ողի 400 հազար աստիճան։ Սույն տարվա ամբողջ մթերումը կհասնի մոտ 5160 հազար ռ.։ Արձանագրվում ե հսկայական աճում անցյալ տարվա նկատմամբ։

Սակայն մթերման ասպարիզում հրապարակ յեկած են այնպիսի բացեր, վորոնք անդրադարձել են աշխատանքի վրա և տեղի տվել զյուղացիության կողմից վորոշ դժգոհությունների։ Նկատվել ե ինվենտարի խոշոր պակասություն, ապահարատի անձկունություն մի շարք տեղերում, բերքն ընդունելու վորոշ դանդաղություն։

Ի հարկե Ալգորինկոպպը վորքան ել լավ աշխատեր ելի բացեր կլիներ։ Պետք եր ավելի պարագաներ դիմավորել այգեկուտին, քան թե այդ յեղավ այս տարի։

Ի՞նչ պետք ե անել յեղող տարվա համար Հաշվի առնելով այս տարվա փորձը, անհրա-

ժեշտ ե՞ ա) հախապատրաստել բավական քանակությամբ ամանեղեն, բ) ապահովել զյուղացի ների պադվալների խնդիրը, գ) ձեռք բերել նասոսներ և բերքն ընդունելու այլ պարագաներ և այլն:

Առանձնապես պետք ե ուշադրություն դարձնել ներդրումներին՝ շինարարության համար։ Մինչ ալժմս թեև ներդրումներ յեղել են՝ կառուցվել են պադվալներ, ողու գործարաններ, բայց այդ ամենը քիչ ե և չի համապատասխանում յեղած պահանջին։

Այդեգործական կոռպերացիայի ուշադրությունը կենտրոնացված ե յեղել համարյա միայն խաղողի շուրջը։ Բանջարաբուծությունը և և պաղարուծությունը աշքաթող են արված յեղել։

Այդգին կուպի կոնսերվի գործարանը, վորագումար մի փոքրիկ ձեռնարկություն ե, անդամ լրիկ չի ապահովվում հում նյութով։

Իսկ բոլորս ել լավ գիտենք, թե վորքան մեծ չափով կարելի յե զարգացնել բանջարաբուլսեր և մրգեղեն։ Նույնպես ծանոթ ենք այն մեծ պահանջին, վորը զգում ե մեր շուկան դրանց նկատմամբ։

Այդ ամբողջից միայն մի յեզրակացություն պետք ե անել, այն ե՝

Այգեգործական կոռակերացիան պետք ե  
ծավալի աշխատանքները շեշտած ուղղությամբ,  
վորով մեծ ողուտ տված կլինի դյուղատնտեսու-  
թյանը և մեր առաջնակարգ պահանջները կ'բա-  
վարարվեն։ Զպետք ե մոռանալ նաև այն հան-  
գամանքը, վոր արդեն կառուցվում և կոնսերվի  
բավական խոշոր գործարան, վորին հում նյութ  
մատակարարելու խնդիրը Ալգգինսկոպին ե վե-  
րապահվում։

### ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՌԵՐԱՑԻԱՆ

Այստեղ յերկար կանգ չ'պետք ե առնենք,  
քանի վոր կազմակերպչական խնդիրները հա-  
մարյա նույն են ինչ վոր մյուս տեսակներում։  
Սկզբի շրջանում կազմակերպվել ե մինչև 29-ը  
միավոր։ Հետագայում նրանք ձուլվել են և վե-  
րածվել 18-ի, իսկ այժմս ընդամենը 14 ընկե-  
րություն ե։ Սակայն, ընդհակառակն, բամբակի  
ցանքսի տարածությունը վնչ թե պակասել ե,  
այլ ավելացել։ Ի՞նչու համար ենք ընկերություն-  
ների միացում կատարել. պարզ ե՝ դրանով կա-  
տարել ենք ծախսերի զգալի կրճատում, հնա-  
րավորություն ենք ունեցել վորակյալ աշխա-  
տակիցներ ընտրելու, ուժեղացնելու կենտրոնի  
անմիջական ղեկավարությունը և այն։

Բամբակի ցանքսի տարածությունը անցյալ

տարի յեղել ե 11.300 դեսյատին, այս տարի 13.100 դես., իսկ 1929 թվին յենթաղրվում ե ցանել մինչև 18.000 հեկտար։ Բերքը 27 թվին հավասարվել ե 1178,8 տոնի, 28 թվին յենթաղրվում ե ավելի շատ, չնայած այն հանգամանքին, վոր բամբակացանները կոռպերացված են 67 տոկոսով, և բամբակի այն մասը վորը գյուղացին վաճառում է, ամբողջապես 100 տոկոսը կոռպերացիայի միջոցով հանձնվում ե Հայրամբակին։

Խոսք լինել չի կարող վոր բամբակագործությունը արագ թափով զարդանում ե, ստանալով պետությունից և կոռպերացիայից ամենալայն օժանդակությունը՝ դրամով, հացահատիկներով, բուժիչ միջոցներով և պարարտանյութերով, ագրոպնությամբ և այլն։

Թված նվաճումներին զուգընթաց ունենք մեծ բացեր՝ սերմացվի, ինվենտարի, վարի ժամանակ վառելանյութով բավարարելու, մատակարարման, վոռոգման և այլ խնդիրներում, վորոնք պետք ե անպայման վերացնել։

Բամբակացանության ուժեղ զարգացումով շահագրգուված ե վոչ միայն գյուղացին, վորի տնտեսությունը մեծ շահ ե ստանում, այլև դրանով միաժամանակ մենք զարդացնում ենք տեկստիլ արդյունաբերության հում նյութի բաղան։

Մոտ ասլագայում հավանական ե կ'կազմակերպվի բամբակ՝ կենտրոն, ինչպես Պանիրյուղը և Այզդինկոռպը:

Մյուս տեսակների՝ ծխախոտագործության, մեղվաբուծության և այլնի մանրամատն, առանձին բնութագրման կարիք չկա:

Նրանք դեռ բավական թույլ են, անդամ դեռ կազմակերպչորեն չեն ձեակերպված, ապրում են վերակառուցման շրջանը, ինչպես որինակ՝ ծխախոտագործությունը 13-ից վերածվեց 6-ի:

Մի քանի խոսք ել ասենք մասնագիտական կոռպերացիալի հետագա զարգացման մասին: Անկասկած այդ մասնագիտացումը պետք ե խորացնել, պլանալին դարձնել, ընդորկելով արևտեսության նորանոր ճյուղերը և առաջին հերթին՝ վոչխարաբուծությունը, վորի համար մինչև այժմ վոչինչ չի արված:

### ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոլլեկտացին շինարարությունը կոռպերացիալի մի ձևն ե, ավելի բարդ և ավելի դժվար քան մինչ այդ թվածները:

Ցեթե կուզեք ճիշտ իմանալ, ու մի ամբողջ նախապատրաստական շրջան և կոլտնտեսությունների կազմակերպման համար. լեթե մասնագիտական կոռպերացիայում աեսնում ենք ա-

ոաջին նմուշներ (լիմինտներ), ինչպես որինակը ընդհանուր չորանոց, հայթալիթում, վաճառահանում և այլն, այստեղ կոլեկտիվացման և յենթարկվում արտադրության ամբողջ պրոցեսը։ Կոլեկտիվ տնտեսությունը մի քանի տեսակ և լինում, սկսած հողի համայնական մշակումից մինչև կոմմունա, վորտեղ ամեն ինչ միացված և թե՛ աշխատանքի, և թե՛ սպառման առաջարկում։

Ի՞նչ նախադրյալներ են հարկավոր կոլեկտիվ կազմելու համար։

Թվենք գլխավորները.

ա) Տնտեսական պայմանները միանդամայն համապատասխան պետք ելինեն։

բ) Հողագին և ջրալին խնդիրները պետք են կարգավորվեն, քանի վոր կոլեկտիվ աշխատանքը պահանջում է առաջին հերթին հողի միացում։

գ) Ազրոնումիական խոշոր ոգնություն։ Պետք են հիշել, վոր կոլեկտիվը առանց գյուղատնտեսի ամենորյա ցուցմունքների լավ չի կարող զարգանալ։

դ) Անհրաժեշտ և ապահովել վարկով, գյուղադիրներով և ղեկավարող ուժերով։

յե) Յեզդ այդ բոլորի հետ միասին գյուղացու իր ցանկությունը ևիր նախաձեռնությունը,

Հայաստանում այժմ ունենք կազմակերպված 80-ից ավելի կոլեկտիվ տնտեսություններ, յեվ այդ, ամբողջը համարլա այս 28 թվին։ Իսկ մինչ այդ ունեցել ենք միայն 7 կոլեկտիվ։ Սակայն այդ 80-ը նրանք են, վոր ուսումնասիրված և առնված են կոռապերացիալի ցանցի մեջ։ Դրանցից գուրս ամեն մի գավառում գոյություն ունեն տասնյակ կոլեկտիվներ, վորոնք կազմակերպված են առանց Կոլտնտեկենտրոնի գիտության։ Ի՞նչ յեզրակացության ե բերում այդ յերեսությը մեզ. այն վոր սկսված ե կոլխոզային ուժեղ շարժում գյուղում, վորի պատճառներն են՝ գոյություն ունեցող տնտեսական պայմանները, կոլխոզներին տված տնտեսական առավելությունը, թուզ և չքավոր տնտեսությունների ձգտումը արագ թափով զարգացնել տնտեսությունը, ընտրել տնտեսավորման այնպիսի ձև, վորի միջոցով ավելի հեշտ կլինի պարքարել կուլակային տնտեսության դեմ, նրա շահագործումից իսպառ ազատվելու նպատակով։

Ահա ինչ ե ասել տասնեհինգերորդ կուս համագումարը՝ «Ներկա շրջանում մանր անհատական տնտեսությունները միավորելու և խոշոր կոլեկտիվների վերածելու խնդիրը պետք ե հանդիսանա վորպես կուսակցության հիմնական խնդիրը գյուղում»։

Ովքեր են դնում դեպի կոլեկտիվ տնտեսությունը:

Ահա մի քանի թվեր:

Բատրակները կազմում են 5,8 տոկոսը, չքավորները՝ 75,8 տոկոսը, միջակները՝ 18,1 տոկոսը, ունեորները՝ 0,3 տոկոսը:

Թվերն ել ապացուցում են, վոր կոլեկտիվները չքավորից ու միջակից են կազմված: Միաժամանակ նկատվում ե, վոր միջակները համեմատաբար թույլ են ընդգրկվում: Այս թվերը մի քանի ամիս առաջ եր: Հավանական ե այժմ միջակների թիվը ավելացած լինի:

Յերբեք չպետք ե մոռացության տալ կոմ. կուսակցության քաղաքականությունը՝ միջակի վերաբերյալ. պետք ե կապել միջակին չքավորի հետ, ստեղծել մի ընդհանուր ֆրոնտ ընդդեմ կուլակի:

Ակտիվ մասնակից անել մի ջակին գյուղում սոց. շինարարության գործին, ահա հիմնականում այն, վորը պետք ե լերեա ամենորյա մեր աշխատանքներում: Այս տեսակետից պետք ե ուժեղացնել միջկակ ներզրավումը մեր կոլեկտիվներում:

Նույն կոլեկտիվներում կա 0,3 տոկոս ունեորներ, բայց կուլակների մասին վոչինչ չէ ասված. ավյալներում:

Առանց բացատրության ել հասկանալի յե, վոր կողեկտիվը կուլակների տեղը չեւ իսկ յեթե նրանք մտել են, բացի վասսից վոչ մի ոգուտ չեն տաւ: Ընդհակառակը, կողեկտիվի ամեն մի անդամ կարող ե ապացուցել, թե ի՞նչպիսի պարբար ե տանում կուլակը կողեկտիվը քայբայելու համար:

Բա մբասսնքը, կաշառքը, սպառնալ իքն ու տնտեսական ազ ազգեցության միջոցները նըրանց ձեռքի դենքն են:

Հակագրենք նրանց մեր միասնականությունը և անխոնջ աշխատանքը:

Կազմակերպված կողեկտիվների մեծ մասում կատարված ե հողաշինարարություն, կազմվում են կազմ – արտադրական ծրագրեր, կանոնավորվում ե և ուժեղանում վարկավորումը և մատակարարումը գյուղգործիքներով:

Սակայն պետք ե ասել, վոր դեռ այդ հսկագործի սկզբին ենք կանգնած: Չունենք անցյալի փորձ: Կան շատ թերություններ: Հաշվի առնելով այն հանգամանքը, վոր 1929 թվին աշխատանքը պետք է առնվազն կրկնապատկվի, պետք ե պատրաստի դիմավորել այդ աշխատանքներին:

## ԻՆՉ Ե ԱՐՎԱԾ ԳՅՈՒՂԻ ՄԵՔԵՆԱՑԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Գյուղատնտեսության մեջ դեռ շատ տեղերում հիմնական գործիքը հանդիսանում է արուրը և դրան համապատասխան այլ գործիքները:

Սրանցով սոցիալիզմ չի կառուցվի:

Գյուղը պետք է ստանա մեքենաներ, և այդ նախապայմանն է սոցիալական շինարարության արագ թափի:

Այդ նպատակի համար պետությունը գյուղատնտեսական կոռպերացիալի միջոցով մեծ գումարներ է բաց թողնում:

Ի՞նչ է արված մինչև այժմ: Գյուղ է ներառուծված տրակառոր 200-ից ավելի, գութաններ յերեք տարվա ընթացքում մոտ 4000 հատ, փոցի, կուլտիվատորներ, սերմազտիչ, հնձող մեքենաներ, կալսող, քամհար, սրսկիչ, սերգատ և այլն և այլն:

26 - 27 թվին բաշխված է 1.369.400 ռ. գլուղինվենտար և բուժիչ նյութեր, 28 թ. դրանից ել ավելի է բաշխված: Կասկած չկա, վորտարեց տարի կուժեղացվեն այդ աշխատանքները:

Սակայն պետք է խոստովանվել վորտար տընտեսական հետամնացության, անկուլտուրականության հետևանքով և այլ մի շարք պատճառներով լավ չենք կարողանում ոգտագործել մե-

Քենաները, փչացնում ենք անփուլթ վերաբեր-  
վելով:

Բազմաթիվ որինակներ կարող ենք բերել  
տրակտորների աշխատանքից: Մեր մեքենաոգ-  
տագործական ընկերությունները բոլորն ել աշ-  
խատում են անկանոն և ֆասով:

Այս բոլորը մեզ ասում են, վոր բավական-  
չե մեքենան գյուղ տանել, պետք ե սովորեց-  
նել գյուղացուն գործածելու ձևը: Գյուղատրն-  
տեսական կոռալերացիան այդ խնդրով նույնպես  
պետք ե զբաղվի: Մատակարարման աշխատանք-  
ներում նույնպես տեղի րեն ունեցել կոպիտ-  
սխալներ: Մեքենան տրվել ե կուլակներին:

### ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Հայգյուղկոռապը մթերում ե գյուղատնտե-  
սական համարյա գլխավոր մթերքները:

Բացի խաղողից, բամբակից, և կաթնեղենից,  
վորոնք հալթալթվում են հատուկ կենտրոննե-  
րի կողմից, նա մթերում ե՝ ձու, մեղր, բոժոժ,  
հացահատիկ, գետնախնձոր, միս, բուրդ, խոտ-  
մազեղեն և այլն:

26—27 թվին մթերված ե Հայգյուղկոռապի-  
կողմից կենտրոնների հետ միասին 7.740.700 ո-  
մթերք, վորը կազմում ե 35,5 տոկոսը գյուղա-

անտեսական մթերքների 27 թ. ապրանքալին  
յելքի:

Ընթացիկ տարում այդ տոկոսը ավելի կը-  
բարձրանա՝ 45-ից - 47 տոկոս, թվեր մանրամասն  
չհնք բերում տնտեսական տարին չլրանալու  
պատճառվի:\*)

Գյուղատնտեսական կոռպերացիայի աշխա-  
տանքները, մանավանդ մատակարարման և հայ-  
թայթման ասպարեզում, մեծ չափով կապված են  
դրամական միջոցների հետ: Այդ միջոցներից  
մեկից կոռպերացիան առայժմ համարյա թե զուրկ  
է: Հայգյուղկոռպը գործ ե անում, այն ել հսկա-  
յական միլիոնների գործ, բայց պարտք վերցրած  
միջոցներով, վորոնց համար ամեն տարի վճա-  
րում ե վորպես տոկոս ահազին գումար:

Որինակ 27 թվին վճարված ե միայն տո-  
կոսի համար մոտ 170 հազար ռուբլի: Մինչեւ  
գյուղատնտեսական կոռպերացիան չափացնի իր  
դրամական միջոցները, աշխատանքները խոշոր  
չափով կկաղան:

### ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱ

Այժմ գյուղատնտեսական կոռպերացիայի  
աշխատանքներում սկսել ենք գործադրել կոն-

\*) Գյուղատնտ. կոռպերացիայում տնտեսական տարին վեր-  
ջանում ե հունվարի 1-ին.

արակտացիալի սիստեմը։ Գյուղատնտեսական կոռպերացիան մի կողմից պայմանագրեր (կոնտրակտներ) ե կնքում պետական-արդյունաբերության, պետական առետրի, սպառկոռագի հետ, իսկ մյուս կողմից կոռպերացված գյուղացիության հետ։

Ի՞նչ նպատակ ե հետապնդում կոնտրակտացիան և ի՞նչ կոնկրետ խնդիրներ ե նա դնում իր առաջ։

Նախ անհրաժեշտ ե ամեն մեկին իմանալ 15-րդ համագումարի վորոշումը, վորում ասված ե։

«Ամեն կերպ աջակցել պայմանագրալին ձեզի (կոնտրակտացիա և այլն) պրակտիկալի զարգացման՝ կոռպերացված գյուղացիության և պետական մարմինների մեջ, վորոնք անմիջական զոդում են ստեղծում գյուղական տեսեսությունների և սոցիալիստական արդյունաբերության համապատասխան ճյուղերի մեջ։»

Զարկ տալ գյուղատնտեսությանը՝ կապել նրան սոցիալիստական արդյունաբերության համապատասխան ճյուղին և ուժեղացնել վերջինի ազդեցությունը առաջինի վրա։

Այս նպատակներն ե հետապնդում կոնտրակտացիան։

ա) Կոնտրակտացիան պետք ե պարունակի

իր մեջ մի շարք՝ կետեր, վորոնք ուղղված են  
տնտեսությունը ռացիոնալ կերպով վարելուն:

Եւսթաղբենք կոնտրակտացիա յեն կնքում  
բամբակացանի հետ. վերջինը պարտավորվում է  
կանոնավոր վարել, պարարտացնել, ցանել լա-  
վորակ սերմ, ցանել շարքացանով, լսել և իրազոր-  
ծել ազրոնոմիական ցուցմունքները և այլն:

Այդ հանդամանքը ինքնստինքյան ազդելու  
յե դրական խմաստով, թե բերքի և թե մթերքի  
վորակի վրա:

բ) Պայմանավորվող մյուս կողմը պարտա-  
վորվում ե՝ ֆինանսական, սերմորակի, և այ-  
լինդիրները ժամանակին հոգալու: Այդպի-  
սով հնարավոր ե կոնտրակտացիալի միջոցով  
գլուղացու տնտեսությանը տալ ցանկալի ըն-  
թացքը:

Սխալված չենք լինի յեթե ասենք, վոր կոն-  
տրակտացիան դառնում ե զյուղացու տնտե-  
սության համառոտ պլանը: Նա ապահովում է տըն-  
աեսությունը վարելու ավելի կուլտուրական ձե-  
զերը և ուժեղացնում արտադրողական կոռպե-  
րացման աշխատանքը:

Այդպիսով կոնտրակտացիայում ընդգրկված  
են մի շարք կարևորագույն կուլտուրաներ:

Մակար պետք ե խոստովանվել, վոր մինչև

այժմ կոնտրակտացիան բուն իր նպատակին քիչ  
ե ծառայել:

Դա ավելի շուտ իրենից ներկայացրել եւ

ՊԱՅՄԱՆԱԳՐ- ՎԱԾԿՈՒԼՏՈՒ- ՐԱՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ	ՀԱՅՀ/Տ ԺԼԻԱԳՐԵ	1926—27 թ.		1928 թ.	
		ՔԱՆԱԿԸ	ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿՐԱ- ԲԱՆՔԱՆ/Ը ԱՐՄԱՆԿՐԵ	ՔԱՆԱԿԸ	ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿՐԱ- ԲԱՆՔԱՆ/Ը ԱՐՄԱՆԿՐԵ
Բամբակ	հեկտ.	12345	100	16017	100
Բուրդ	տոն	65,5	13,4	245,7	100
Բուժում	»	98,3	100	117,9	100
Խաղող	»	—	—	73712,2	90
Ծիախոս	»	—	—	174,8	—
Շվեցարական					
պանիր	ցենտ.	2460	100	2130	100
Թուշի պանիր	»	4000	67	3770	72

առևտրական պայմանագիր՝ գործառնություն կա-  
տարող յերկու կողմերի միջև:

Պետք ե աշխատել, վոր 1929 թվին կոնտ-  
րակտացիան նախ՝ ավելի ծավալվի և յերկրորդը՝  
նրա ձևական կողմը վերանալով տեղի տա իսկա-  
կան բովանդակության ուժեղացմանը:

## ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղատնտեսական կոռպերացիան դեռ բավական աղքատ և արտադրական ձեռնարկություններով:

**Ահա նրանց թիվը 26—27 թ.։**

Պանիր և լուղի գործարաններ 58 ը, վորից միայն 4-ը խոշոր ու կանոնավոր ձեռնարկներ են և պատկանում են Պանիր-յուղ կենտրոնին, իսկ մնացածը ցանցին. կոնսերվի գործարան 2 հատ. ողու գործարանները՝ ցանցում—7 հատ. մետակ-սամանարան—1 հատ.։

**Էնդամենը 68 գործարան, 376 բանվոր—  
ծառայողներով։ Արտադրանքի արժեքը հավասար  
է—1.622.400 ռ.։**

Արտադրական ձեռնարկների թիվը արագ կերպով պիտի շատացնելու նրանք հանդիսանում են գյուղատնտեսական մթերքների վերամշակ-ման և վրակապես բարձրացնան, արտադրա-կան կոռպերացիայի ուժեղացման և ամրող գյուղատնտեսության ընթացքի վրա ազդող լա-վագույն միջոցը. այդ իոկ պատճառով զյուղա-տնտեսական կոռպերացիայի պլանում 29 թ. և մյուս տարիներում ալդ մասը խոշոր տեղ ե-րանում։

---

## ՅԵԶՈՐԱԿԱՍՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Մենք սեղմ կերպով արծարծեցինք Գյուղատնտեսական կոռապերացիալի հիմնական խնդիրները, նշելով թե մեր նվաճումները և թե մեր բացերը:**

**Ամփոփ կերպով այդ խնդիրները հետեւյալներն են.**

**ա) Կոռապերացման ընդհանուր զարգացումը:** Կոռապերացվող տնտեսությունների թվի աճման զգալի նվաճումներ:

**Վորպես բաց արձանագրեցինք կանանց թույլ կոռապերացումը, լեռնագագառների կոռապերացման անհամեմատ հետ մնալը,**

**բ) Կոռապերացված մասսալի սոցիալ-տնտեսական պատկերը:**

**Մենք տեսնում ենք, վոր զյուղատնտեսական կոռապերացիալի հիմնականում չքավոր և միջակ զյուղացիներն են ընդգրկված։ Բայց զուգընթաց անհանդուրժելի գտանք կուլակալին տընտեսությունների ուժեղ կենտրոնացումը մի քանի ճյուղերում (կաթնատնտեսական կոռապերացիայի գծով՝ Փամբակ-Լոռու զագառում), նրանց դիմոդրությունը մեր քաղաքականության և կոռապերատիվ ձեռնարկներին։**

**Խոշոր բաց համարեցինք նաև այն, վոր մինչ**

որս Գյուղատնտեսական կոռագերացիան ձեռքի տակ չունի չքավորության վերաբերյալ ամենաստուլդ տվյալները, վորոնց վրա անվերապահորեն հնարավոր լիներ հենվել յեզրակացություններ անելիս, և վերջապես չքավորության կոռագերացման ֆոնդերի վոչ ժամանակին և լրիվ ողտագործումը:

գ) Կոռագերացիայի արագ մասնագիտացումը, վորն իրեն արդարացրեց և այսոր մեր առաջդրեց այս մասնագիտացման աշխատանքների ավելի խորացման, նոր հատուկ կենտրոնների հաղմակերպման խնդիրը:

Վորապես բաց և աշխատանքների խոչընդուահանդիսացող յերեսությունը մատնանշվեց տնտեսական շրջանացման բացակայությունը:

դ) Կոռագերա ոիվ միավորների աճումը նրանց խոշորացումը և աստիճանաբար առողջացումը:

Կազմակերպչական աշխատանքի թերությունը հաւաքեցինք անցյալում անկենսունակ ընկերությունների կազմակերպումը և առաջադրեցինք հետագայում խուսափել այդ թերությունից:

լե) Կարկավորման աշխատանքներում.—

Կարողացել ենք կարճ ժամանակում հսկայական գումարներ վարկի կարգով տալ գյուղա-

ցուն՝ տնտեսության զարգացման և վերակառուցման համար։

Զքավորի և միջակի ուժեղ վարկավորումը. — Զքավորական վարկավորման հատուկ ֆոնդի կազմակերպումը, այդ բոլորը նվաճումներն են։

Սրան զուգընթաց արձանագրեցինք պրոցեսարական դասակարգային գծի կողիտ աղավաղումը, վորը արտահայտվել ե կուլտակիներին վարկավորելու և մեքենաներ տալու մեջ։

զ) Կոլլեկտիվ տնտեսության շինարարության խոշոր նվաճումները, նրա հեռանկարները և ցեղած թերությունները և այլն։

Սրանից հետո մեր աշխատանքներն ավելի պետք ե ծավալվեն, նորանոր նվաճումներ ձեռքբերելու համար այդ բնադավագառում։



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0034276

A 670

118

1119

1119